

ունի 4 վայրկեան և 5 երկվայրկենի սև բուրդէ տոպրակով մը. 5 վայրկեանի՝ մութ կանաչ բուրդէ տոպրակով. 5 ուկէս վայրկեանի՝ կարմիր տոպրակով, և 8 վայրկեանի՝ սպիտակ տոպրակով մը:

Հուսկ յետոյ զգեստին ձեռն ալ յատուկ ուշադրութեան արժանի է: Զգեստի զանազան տարբերաց մէջ օղոյ խաւեր կը մնան, և մենք գիտենք որ օղը վատ հաղորդիչ է ջերմութեան: Rubner փորձերով հաւաստեց որ, մի և նոյն կերպաւը զործածելով, բազուկին վրայ ջերմութեան կորուստը նուազած էր 12.5 առ հարիւր համեմատութեամբ՝ զուսպ թեզանիքով, և 17.5 առ հարիւր՝ լայն թեով: Որպէս զի օղոյ խաւերը կարենան ազդեցիկ ըլլալ, հարկ է որ անոնք ըստ կարելւոյն քիչ անգամ նորոգուին: Այս տեսակէտով ամէնակարևոր ազդեցութիւն մ'ունին ուսումնները:

Ահաւաստի, այս նիւթիս նկատմամբ Ber-goniեի ստացած թիւերն միտադական հմարի (buste) մը յաջորդաբար զանազան տեսակ զգեցնելով և իւրաքանչիւր անգամ անոր պաղելուն աստիճանը չափելով:

Զգեստ	ծանրութիւն զգեստի	աստիճանադրոյց պաղելուն
Ու մէկ . . . կրամ	0	1
Բամակէ բարակ հիւստածք . . . »	340	1.1
Բուրդէ և մետաքսէ թեթև յապիկ »	190	1.5
Բուրդէ հաստ հիւստածք . . . »	850	1.6
Վաշիկ զգեստ ֆլանելով աստառուած »	1200	1.6
Հաստ յապիկ բամբակի ֆլանել »	465	1.7
Բուրդէ զգեստ ֆլանելով աստառուած »	1350	1.9

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԽԱՐԲ

Ա Բ Բ Ի Ա Ն Ո Ս

(Տես էջ 94)

87. — Տիգրան և Միհրդատ շրջակայ գաւառները պտտելով նոր բանակ մը հաւաքեցին: Ասոր հրամանատար կարգուեցաւ Միհրդատ, որովհետև Տիգրան կը համարէր որ անոր կրած ձախողանքը բաւական զաւս մ'եղած ըլլային: Պարթևաց թագաւորին ալ դիսպաններ զրկեցին օգնութիւն խնդրելու համար. սակայն լուկուլոս ալ նամնապէս դիսպաններ զրկեց անոր՝ համոզելու համար որ կամ իրեն հետ դաշնակցի և կամ բոլորովին չէզոք մնայ, Պարթևն՝ ի ծածուկ դաշնակցեցաւ և օգնութիւն խոստացաւ թէ՛ մէկ կողման և թէ՛ միւսին, բայց ոչ միոյն զրկեց: Միհրդատ զինարաններ հաստատեց ամէն քաղաքներու մէջ, և զօրակոչ ընելով գրեթէ ամբողջ Հայերը հրահանգեց զինամարզի. սակայն յետոյ միայն ընտրելագոյնները ժողկելով իբր Եթովպիայէն հազար հետեակ և երեսունուհինգ հազար ծիւղոր, միւս ամէնն ազատ արձակեց: Այս հաւաքուած զինուորները բաժնեց թեւերու և վաշտերու գրեթէ հիշտ այնպէս ինչպէս սովորութիւն է իտալիոյ բանակաց կազմութեան, և յանձնեց զանոնք Պոնտ

1. Պարթևաց թագաւորին անունը Պարթուսոս չէր, ինչպէս կը նշանակէ Սելուկիդոս, այլ Սանատրուկ կամ Սենտրիկ, ինչպէս որ կ'երևի ըստ Աքրիտոսի, Ֆրատաքին Հայրն ըլլալով: Նրաձուկ ձեռնարկներ կ'ընէր երկու թագաւորներուն հետ իրենց նիւակակցելու համար, և ի փոխարէն իրեն օժանդակուած թեւն, անոնցմէ կը պահանջէր Միջագետքը: Միհրդատին առ այս Պարթևաց թագաւորն զրաձ նամակը յիշատակուած կը գտնուի Սալուստիոսի Պատմութեանց պատախիկներու չորրորդ գլխի մէջ:

տոսի մարտիկ գունդերու որ աւելի ևս հրահանգուին զինուց: Երբ Լուկուլլոս իրենց դէմ յառաջեց, Միհրդատ ամբողջ հետեակներն ու ձիաւորներու ալ մեծ մասը բանակեցուցած էր բլուրի մը վրայ:

Իսկ Տիգրան ձիաւորաց միւս մասով կը յարձակէր հռովմէական բանակի ցուրեակներէն երկայ, սակայն յաղթուեցան անոնցմէ: Այսու հռովմէական ցորենակիրը շատ աւելի ապահովութեան արմէն կողմէ պաշարներ կը հաւաքէին և մինչև իսկ Միհրդատայ բանակին մօտ կու գային բանակելու: Յանկարծ փոշոյ ամպ մը բաթճաղացաւ իրեն նշան թէ Տիգրան կը հասնէր, և յիշաւ Տիգրան աւագաբար կը յառաջէր, որովհետեւ երկու թագաւորներ դարանած էին Լուկուլլոսի բանակին իրենց մէջտեղ փակելու: Բայց Լուկուլլոս իրեն ձիաւորաց ամէնէն ընտրելոյն գունդերը յառաջ մղեց ընդդէմ Տիգրանայ, հրամայելով որ ըստ կարելւոյն հետեւ երթան և պատերազմին Տիգրանայ դէմ և արգելուն որ չկարենայ իր զինուորները ճամբու ընթացքէն իրեն ի ճակատ պատերազմի դասաւորել: Իսկ ինքն կը բռնադատէր զՄիհրդատ պատեւրօգմբու, սակայն որքան ալ փոսերով ու խրամատներով շրջապատեց զայն, չյաշտիցեալ: Հուսկ յետոյ ձմեռը վրայ հասաւ և երկու կողմերն ալ ստիպուեցան ընդհատել պատերազմը:

88. — Տիգրան քաշուեցաւ Հայաստաւ:

Նի ներքսագոյն կողմերը և Միհրդատ դարձաւ իր Պոնտոսի թագաւորութեան մնացեալ գաւառները իրեն բանակէն չորս հազար զինուորներով և նոյնքան ալ Տիգրանի բանակէն առածներով: Լուկուլլոս ալ ստիպուեցաւ անոնց հետեւիլ, բռնադատուելով բանակը տեղափոխել, պաշարներու նուագուեցան ունենալով: Միհրդատ սակայն աւելի արագ յառաջելով՝ յարձակեցաւ Ֆապիոսի վրայ, զոր Լուկուլլոս հոն թողուցած էր իբրեւ հրամանատար, և բռնադատեց զինքը փախչելու, անոր գունդէն հինգհարիւր հոգի սպաննելով: Ֆապիոս յաջորդ օրն ազատ արձակեց բանակին մէջ ունեցած բոլոր զերինները, և վերստին սկսաւ՝ և ամբողջ օրը շարունակեց՝ պատերազմը: սակայն նորէն ստիպուեցան հռովմէական բանակը տեղի տալ, մինչև որ Միհրդատ պարսաւքարով մը վիրաւորուելով ծունկէն, և նետով մը աչքին ներքեւ, պատերազմի դաշտէն դուրս քաշուեցաւ: Այսպէս զենքերը լռեցին բաւական օրեր, որովհետեւ մէկ կողմը կը խնամէր թագաւորին առողջութիւնը, և միւս կողմէն ալ հռովմայեցիք ստիպուած էին խնամել իրենց այնքան բազմաթիւ վիրաւորները: Թագաւորը, կը խնամէին Ագարը, օժերու թոյնեղէն բաղարդուած դեղերով: Ասոնք Սկիւթացուցեց իւր մէկէն և բժշկութեան պատճառաւ միշտ իրենցմէ ումանք բանակին մէջ թագաւորին կ'ընկերէին: Այս միջոցին իւր

1. Այս զինուց ընդհատման պատճառն Արքիանոսի քով շատ պայծառ և համոզիչ չէ. ձմեռունէ աւելի ուրիշ ազդու պատճառ մը փնտրելու ենք: Լատինական հին թարգմանութիւնը (տպարգ. 1560ին) թերեւ քնազդի օրինակի տարբերութեամբ մը ձմեռուն փոխարէն կը կարգայ հոս քաղց. nec ante ab incepto destitit, quam fames incidens amhorum dissolvit opera: Սակայն մեր գործածած ընագիրը կը գնէ յայտնապէս. Αὐτὸς δὲ τὸν Μὲγροδᾶττην προχαλοῦπτενος εἰς μάχην, καὶ περὶταφρεῦσιν, οὐκ ἤ-

ρέθυζεν· ἔως χειμῶν ἐπιτεσὼν διέλυσε τὸ ἔργον ἄπασι.

2. Դիմն Կասսիոս կ'աւանդէ որ Ֆապիոսի պարտութեան պատճառն թրակացիք եղան, որոնք լրտեսելու համար յառաջ դրկուած ըլլալով բնաւ ստոյգ լուրեր չբերին, ուստի իրենց զօրավարն ալ առանց զգուշութեանց յառաջ քաշելով յանակնկալ ընդհարեցաւ Միհրդատայ բանակին. բայց աստի ճակատամարտի միջոց ալ իրեն հակառակ դարձան և մեծ փեսաներ պատճառեցին հռովմական գունդերուն:

գունդերով վրայ հասաւ Դրիարիոս, ու ընէ զօրավար մը զոր Լուկուլլոս ղրկած էր Ֆապիոսի։ Դրիարիոս առաւ Ֆապիոսի հրամանատարութեան աստիճանը և անոր զօրքերը։ Քիչ ժամանակ վերջ, վերստին յառաջ քալեցին երկուստեք Միհրդատ և Դրիարիոս պատերազմելու համար, սակայն ահաւոր փոթորիկ մը, որուն նմանը դեռ մարդկային յիշողութեան մէջ չկար, խորտակեց երկու կողման բանակաց վերաններն ալ, և զառթափ ժայռերէն վար հոսեց անդնդոց մէջ ձիեր ու զինուորներ։ և այս պատճառաւ երկու բանակներն ալ յետոյ նահանջեցին։

89. — Քիչ յետոյ համբաւ տարածուեցաւ թէ Լուկուլլոս ինքնին կու գայ յապարկզ և Դրիարիոս՝ ուզելով անոր բացակայութեան միջոց պատերազմը մղել, ահապարեց և դեռ գիշեր ժամանակ ասպատակեց Միհրդատայ յառաջապահ գունդերուն վրայ։ Երկար ժամանակ անորոշ բաղդով երկարեցաւ պատերազմը, մինչև որ թագաւորն թշնամի բանակին այն մասին վրայ՝ որ իւր դիմացն էր, ահաւոր բաղիմամբ մը խուժելով, յաղթութիւնը վճեց։ Նա խորտակեց թշնամի բանակին կարգերը և հետևախախտմբ ըջեց մղեց գայլոտ ճախճախտութի մը մէջ, ուր հազիւ կրնային ոտից կռուան գտնել, և բոլորը ջարդեց. յետոյ բաղդին ոգևորու-

թեամբ եռանդնավառ կը հալածէր ձիաւորաց գունդը, երբ հռովմայեցի հարիւրապետ մը որ իբրեւ զինակիր սպասեակ կ'ընկերէր հծծեալ թագաւորին, յանկարծ խորամուխ տիգեց սուրն անոր բարձուկրին մէջ, կասկածելով որ չյաջողի վիրաւորել զինքն իթէ փորձէր ի թիկանց հարուածել զինքը, որովհետեւ զբաշնեք զգեցած էր։ Իսկոյն մերձակայք յօշոտեցին դաւաճան խոցողը, և Միհրդատ փախադրուեցաւ բանակին հետ։ Եւ մինչ ամենափայլուն յաղթանակը կը ծիծաղէր հռովմայեցւոց վրայ խոյացող բանակին, թագաւորին բարեկամները իրենց զինուորաց հնչեցողութիւն դադարման փողերը։ Այս ամենայն ակնկալութեան հակառակ կողմը խռովեց մարտիկները որոնք տազնապաւ կասկածեցան թէ մի գուցէ ծանր աղէտ մը պատահած ըլլայ, վերջապէս իմանալով պատահած դէպքը, հոն իսկոյն դաշտին մէջ տազնապալիւր շրջապատեցին թագաւորին մարմինը, և չէին հեռանար մինչև որ Տիմոթէոս արքունի բժիշկը, դաղբեցնելով արեան հոսումը, բարձր տեղէ մը ներկայացուց իրենց թագաւորը, ինչպէս որ երբեմն Հնդկաստանի մէջ, Աղեքսանդր, մինչդեռ կը խնամուէր, նաւի մը վրայէն տեսնուեցաւ Մակեդոնացի բանակին, որ իրեն թագաւորին կենաց վրայ կը դադար՝ Միհրդատ, հազիւ թէ սթափեցաւ,

1. Դիոն Կասսիոս ընդհակառակն կը պատմէ որ Դրիարիոս, Միհրդատայ բազմաթիւ բանակէն վախճալով, բնաւ չունէր դիտումն պատերազմելու, այլ կ'ուզէր Հանդարտ սպասել մինչև որ Լուկուլլոս իր գունդերով հասնէր. սակայն յետոյ տեղեկանալով որ թշնամին կը յառաջիւր և կ'ուզէր յարձակիլ Տատասա կողմած ամրոցին վրայ, ուր ամփոփուած էին Հռովմայեցւոց բանակին կառքերն ու կարասիք, ստիպուեցաւ պարագաներէն, և մինչև իսկ բուն իր գունդերուն սպառնալիքէն ալ, պատնէշներէն դուրս ելլելու և թշնամւոյն հետ պատերազմն ընդունելու։

2. Աղեքսանդրի դէպքն անշուշտ ծանօթ է մեր ընթերցողաց, Մինչդեռ մակեդոնացի դիւցազնը, Մալքայց երկրին մէջ պատերազմելով, անոնց գլխաւոր քաղաքներէ մին պաշարած էր, յաջողեցաւ իրեն զինուորներով, պարիսպներուն մէկ դուռը խորտակելու, և անտի ներս մտնելու։ Հնդիկք այն ատեն իսկոյն ամրացան իրենց ներքնաբերդին մէջ և սկսան անոր պարիսպները պաշտպանել։ Աղեքսանդր սակայն իր սովորական դիւցազնութեամբ զինուորներուն ձեռքէն սանդուխ մ'առնելով, ամենէն առաջ սլացաւ անոր վրայ սրբազան վահանին հովանւոյն ներքեւ զոր իլիական Պալլասին տաճարէն

իսկոյն կշտամբեց իր զօրավարները որոնք յաղթական բանակի նահանջ հրամայած էին, և նոյն օրն իսկ յառաջ մղեց դարձեալ իր զունդերը հռովմայեցւոց բանակեաղին վրայ: Սակայն հռովմայեցիք արդէն վախերնէն փախած էին, և իրենք սկսան մեռեալները կողոպտել: այն ատեն տեանուեցան մեռելոց մէջ քսանուչորս տրիրունք և հարիւր յիսուն հարիւրապետք: Այսքան բազմութիւն հրամանատարներու դեռ երբէք մէկ պատերազմի մէջ այսչափ դիւրաւ կորսուած չէր հռովմայեցիներէն:

90. — Այսուհետեւ Միհրդատ արշաւեց դէպ ի Հայաստան, զոր այժմ Հռովմայեցիք փոքր կը կոչեն և հոն կը ժողվէր բոլոր ուսեղեաց պաշարներն, ինչ որ դիւրին էր փոխադրել, իսկ մնացեալ ամէնը կը քննէր՝ որպէս զի Լուկուլլոս իրմէ վերջ գալով չկարենար անոցմէ օգ-

տուիլ: Այս միջոցին Աղդիտիոս, հռովմեական ծերակուտի անդամներէն մին, որ դատապարտութեան երկիւղիւ շատ ժամանակ է Վեր հայրենիքէն փախած և Միհրդատայ քով ապաւինած էր, և իբրեւ բարեկամ մը նկատուած էր իրմէ, ընդդէմ թագաւորին դաւադրութեան յանցանքի մէջ բռնուեցաւ: Միհրդատ անվայել համարեց Հռովմայ ծերակույտ մը չարչարել, ուստի հրամայեց պարզապէս մեռցնել զինքը. սակայն անոր դաւակիցներն ամէնն ալ ամենածանր տանջանքներու ենթարկեց, ի բաց առեալ Աղդիտիոսի ազատազրեալ ծառանները, զորս առանց որ և է պատժոյ ազատ արձակեց, որովհետեւ բռնադատուած էին հպատակիլ իրենց տիրոջ կամաց:

Լուկուլլոս մինչդեռ իրեն զունդերով ընդդէմ Միհրդատայ վերստին բանակ յարդարած էր, Ասիոյ փոխհպատտսը պատ-

կողոպտած էր և այն ատենէն ի վեր միշտ անէն պատերազմներու մէջ իր առջնէն կը քայլէր: Թագաւորն արդէն գրեթէ բարձրացած էր պարիպներուն վրայ, երբ սանդուխը խորտակուեցաւ չկարենալով տանիլ այնքան զօրաց բազմութիւն որ Ալեքսանդրի ետէն խուժած էին անոր վրայ, և թագաւորն միայն մնաց պարսպաց վրայ, նշաւակ թշնամեաց բոլոր նետերու և աղեղնաբուս:

Ալեքսանդր չկորսնցուց բնաւ իւր արիասրտութիւնը և յետ քաջաբար պաշտպանելու ինքզինքը՝ ստապելով այն ամէնքը որ կը փորձէին իրեն մերձենալ և զինքը վիրաւորել, ցատկեց վար բերդին մէջ պարիպներու շրջափակին մէջտեղ, ուր նորէն չէր դադրեր իւր քաջայայնդուգն հարուածները տեղալէ յարձակողաց դէմ, մինչև որ իւր բարեկամներն ալ հասան և ազատեցին զինքն այնքան սպառնական վտանգէն: Սակայն այսպիսի խառնաշփոթ մարտակցուութեան միջոց զրահներէն թափանցանց նետով մը վիրաւորուեցաւ կուրծքէն, և Մակեդոնացիք վահանի մը վրայ զնեւով զինքը փո-

խաղեցին իւր վրանին մէջ վէրքը դարձանելու համար: Բանակին մէջ տարածուեցաւ իւր մահուան լուրն և ընդհանուր տխրութիւն և վճատութիւն տիրեց, զոր իմանալով Ալեքսանդր, հագիւ մի քիչ կապզուրուած՝ հրամայեց որ զինքը տանին Խորադ գետին ափունքը յաղող կերպով նաւարկելու համար գետն ի վար դէպի բուն բանակը, որ այն ժամանակ իւր վրանները զարկած էր Ալեքսին և Խորադ գետերու խառնուրդին քով Հեփեստիոնի հրամանատարութեան ներքեւ: Ալեքսական նաւն երբ հասաւ բանակին մօտ, Ալեքսանդր վերցնել տուաւ յետաւ, կողմեան բոլոր առաջատարներն ու վարաւ գոյները որպէս զի ամէնքն ալ կարենան զինքը տեսնել. և այսպէս մինչ ամէնքը ճշմարեցին թագաւորը, ցնծութեան աղաղակներ բարձրացուցին, ոմանք ձեռքերին դէպ ի երկինք կը բարձրացնէին, ուրիշներ դէպ իրենց թագաւորը, և ոմանք մինչև իսկ կ'արտասուէին ուրախութեամբ այսպիսի անակնկալ սքանչելեաց վրայ:

Հմտ. Արիստանոս. Գիրք 2. Պատմութեանց:

գամ հրատարակեց որ Լուկուլլոս Հռովմայ ծերակուտին կողմանէ պաշտօնագուրկ յետս կոչուած էր, որովհետեւ իրեն սահմանուած ժամանակէն չսփազանց շատ յերկարած էր պատերազմը. իրեն բանակներն ալ լուծուած էին և ով որ անհազանք գտնուէր բոլոր անոնց ստացուածքը հասարակաց պետութեան գրանաւելու սպառնալիք կար։ Չինուորաց բանակները լուծուեցան բոլոր, ի բաց առեալ միայն քիչեր, որոնք արդէն չսփազանց աղքատ ըլլալով վախ չունէին տուգանքէ, և ընտրեալոցն համարեցան Լուկուլլոսի հետ մնալ։

91. — Այս կերպով Լուկուլլոսի պատերազմն ընդդէմ Միհրդատայ ոչ մէկ որոշ և հաստատուն ելքի յանգեցաւ։ Եւ ասոր պատճառն այն էր որ Հռովմայեցիք իստալիոյ ներքին ապստամբութիւններով տագնապած, և միանգամայն սովէն ալ բռնադատուած, քանի որ ծովերը բոլոր լեցուած էին ծովահէններով, անյարմար դատեցին այսքան ծանր պատերազմի մը բռնուիլ քանի որ յառաջագոյն միւս ամէն նեղութիւնք բարձուած չէին։ Միհրդատ անդրադառնալով այս ամէնը, վերստին ասպատակեց կապադովկիոյ մէջ և ամրացուց իրեն պետութիւնը։ Հռովմայեցիք ամէն ինչ անգիտանալ կեղծեցին քանի որ դեռ ծովերը մաքրուած չէին, սակայն երբ ծովահէններէն ազատեցին ծովերը, մինչդեռ Պոմպէոս, ասոնց խորտակելը, դեռ յԱփա կը գտնուէր, շուտով վերստին ձեռք առին ընդդէմ Միհրդատայ պատերազմը, յանձնելով Պոմպէոսի անոր հրամանատարութիւնը։

— «Արդ որովհետեւ, — կը սկսի շարունակել հոս հեղինակը, — Պոմպէոսի ծովու վրայ կատարած գործողութիւնները, նախարան մ'են իրեն ընդդէմ Միհրդատայ արշաւանաց, և իմ ուրիշ ոչ մէկ գրութեանցս յարմար նիւթ կը մատակարարեն, պատշաճ կը թուի ինձ գանոնք ալ պազուցանել հոս համառօտիւ վերապատմելով գանոնք »։ Եւ յերաւի 92—96 գլուխներու մէջ կը պատմէ անոր ընդդէմ ծովային յետագակաց կատարած յաղթանակը, զոր մենք աւելորդ կը համարինք և մեր նպատակէն դուրս։ —

97. — Այսքան արագ և այսքան զարմանալի քաջագործութեան համար Հռովմայեցիք փառաւորեցին զՊոմպէոս և ընտրեցին զինքը, մինչդեռ ի կիլիկիա կը գտնուէր, հրամանատար Միհրդատեան պատերազմին, լիազօր իշխանութեամբ հաւասարապէս պատերազմ կամ խաղաղութիւն ընելու և յայտարարելու այդ ժողովուրդները Հռովմայ բարեկամներ կամ թշնամիներ, ինչպէս որ իրեն պատշաճագոյն երևէր։ Եւ դարձեալ մինչև այն ժամանակ անլուր եղանակաւ մը իրեն հրամանին ենթարկուեցան բոլոր այն հռովմէական բանակները որ իտալիայէն դուրս կը գտնուէին։ Եւ թերեւ այս պատճառաւ Պոմպէոս Մեծ կոչուեցաւ. որովհետեւ ընդդէմ Միհրդատայ պատերազմն ուրիշներ ալ ի գլուխ տարած էին։ Ուրեմն Պոմպէոս իսկոյն Ասիայէն կոչելով բանակը քալեց ընդդէմ Միհրդատայ։ Միհրդատ ի պա-

1. Չարմանալի է Արիստոտի նախանձն Պոմպէոսի մեծ կոչուելուն համար։ Յիշատի Պոմպէոս մեծ արդիւնք ունեցած էր Հռովմայ պետութեան համար՝ ծովահէններու լընջուելով։ Պլուտարքոս կ'աւանդէ որ այն անգնահատելի յաղթանակը տարաւ Պոմպէոս ամենաբոյր ժամանակի մէջ, — և ոչ իսկ երեք ամիս, իսկ Միհրդատայ նկատմամբ զիսկ

տուածն ստոյգ է. ուրիշ զօրավարներ ալ զանազան պատերազմներ մղեցին ընդդէմ Միհրդատայ և անոր յաղթեցին. արդէն այս պատերազմն ալ, որուն միայն հայկական պարագաները (episodes) քաղելով կը ներկայացնենք, է ըստ կարգի երրորդ և վերջին պատերազմն Հռովմայեցեաց և Միհրդատայ միջև։ Անցողաբար ներուի մեզ յայտնել որ

տրաստի ունէր երեսուն հազար ամէնէն ընտիր հետեակներ և չորս հազար ձիաւորներ¹, և անոնցմով բռնած էր սահմանագլուխը. սակայն մեծ նեղութիւն կը ըսէր պաշարներու նկատմամբ իր թագաւորութիւնն ամբողջ Լուկուլիոսէն ապակա նուած ըլլալով. այնպէս որ շատերը կը ջանային թշնամոյն կողմն անցնել, բայց եթէ Միհրդատ իմանար և բռնէր, ամենախիստ տանջանաց կ'ենթարկէր զանոնք, զոմանս կուրացուցած կախաղան կը հանէր, ուրիշներն ալ ողջ ողջ կ'ալրէր. Եւ այս տանջանաց սարսափը շատերը կասեցուց զաստիքը փախչելէ. սակայն ինքն ալ նուազ տագնապած չէր սովի սարսափէն:

98. — Ուստի դեսպանութիւն ղրկեց առ Պոմպէոս իմանալու համար թէ ինչ պայմաններով կրնային խաղաղութիւն կրնալ, և Պոմպէոս պատասխանեց որ հաշտութիւն կ'ընէր եթէ ետ տայ հողմայեցի դասալիք փախստականները և ինքզինքն ալ Հռովմայեցւոց տրամադրութեան ենթարկէ: Միհրդատ լսելով զայս հաղորդեց իրեն ըով զտնուող փախստականներուն որոնք սարսափահար մնացին: Այն ատեն թագաւորն երգունցաւ որ բնաւ հաշտութիւն պիտի չընէ Հռովմայեցւոց հետ, անոնց անյազ ագահութեան պատճառաւ. և ոչ զորք պիտի մատնէ անոնց և թէ պի-

տի չընէ բնաւ ինչ մը որ իրենց հասարակաց օգտին համար չըլլայ: Մինչ այս, Պոմպէոս դարանի դնելով ձիաւորաց մաս մը, միւս մասը յայտնապէս ղրկեց թագաւորին յառաջապահ գունդերուն դէմ, հրամայելով որ զանոնք պատերազմի զգոռն և փախչին, իբրև թէ պարսկաւոր ըլլան: Կատարուեցաւ զրգուրթիւնը և փախան՝ թշնամին իրենց ետէն ձգելով, երբ Պոմպէոսի դարանակալ գունդերը շրջապատեցին զանոնք և փախցուցին մինչև իսկ բուն իրենց ճամբարները, որոնց մէջ ալ թերևս մտած կ'ըլլային փախստականներուն հետ, եթէ Միհրդատ առաջուց գուշակելով զայս՝ հետեակախուսէր յառաջ շխաղցունէր. Ուստի Պոմպէոսինք ետ ըսաւ զուեցան. այս եղաւ ելքն Պոմպէոսի և Միհրդատայ միջև առաջին մարտափորձի, կամ մանաւանդ՝ առաջին ձիաւորաց ճակատամարտի:

Հ. Յ. ԱԻԳԵՐ

ՃԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ԳՐՈՑ

ԸՍՏ ՀԱՅԿԱՅ ԵՐԶԱՆԻՒ

(Shu էջ 65)

չատ գեղեցիկ գործ կ'ըլլար եթէ գտնուէր մէկն որ այս երեք Միհրդատեան պատերազմաց պատմութիւնը, զոր շատ գեղեցիկ կերպով նկարագրած ու ներկայացուցած է Արիարնոս, ամբողջովին հայերէն թարգմանէր: Արեւելեան պատմութեան համար հետաքրքրական են նաև իւր Աղտրական պատերազմաց պատմութիւնը, ինչպէս Պարսկականքն ալ, թէպէտև անվաւեր են և Արիարնոսի չեն պատկանիր:

1. Ձիաւորաց թիւը կիսով նուազ կը յիշատակուի Պլուտարքոսի ջով ուր փոխանակ չորս հազարի կը կարդանք միայն երկու հազար:

Յետ առաջին մասին մէջ պատճառաւորանութեամբ ցոյց տալու թէ իսրայելացիք չորս հարիւր տարի չիկեցան Եգիպտոսի մէջ, կը մնայ հիմայ ութերորդ զլիւոյն վերջակէը դնելու համար՝ ապացուցանել այս երկրորդ մասովը թէ չորս հարիւր տարին որ յիշատակուած է Արեւհատու տեսիլքին մէջ, պէտք է այս տեսիլքին ճիշտ ժամանակը առնուլ իբր մեկնակէտ, և անկից սկսեալ մինչև իսրայելացւոց Եգիպտոսէն ելլելու ժամանակը չորս հարիւր տարի հաշուել:

Այս մասին մէջ ժամանակագրիներու կարծիքները կը տարբերին իմ կարծիքէս, վասն զի ոչ մէկ տարւոյ, այլ քսան տա-